Արձանագրության 3

Սննդամթերքի փաթեթների ձեռքբերման ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/12 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

30.08.2019թ.
Ժամը՝ 10:30

Ք. Երևան

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Փլավչյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Գասպարյան /գնահատող/, Ա. Բաղդիշյան /գնահատող/
Կ. Չիլինգարյան /բացող/, Ս. Կատվալյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության և մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

(Ա. Փլավչյան)

1. Ընդունել ի գիտություն որ.

1.1 «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն և «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը համապատասխանում է հրավերի պահանջներին:

1.2 Ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող ճանաչված մասնակցի կողմից էլեկտրոնային կայքի միջոցով հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել է հրավերով պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև գնման առարկայի իր կողմից առաջարկված տեխնիկական բնութագիրը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերով սահմանված բնութագրին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. Ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Ա. Փլավչյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
Ցիկլոիդ ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/12 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Ա. Փլավչյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/12 ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Ցիկլոիդ» ՍՊԸ-ին և վերջինիս ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

3.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ տաս օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ա. Փլավչյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11:20-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ա. Փլավչյան

Անդամներ՝ ---------- Ա. Բաղդիշյան

---------- Կ. Չիլինգարյան

---------- Ս. Կատվալյան

---------- Ա. Գասպարյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան